

„Droschak“

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՕՇԿԿ

Adresse:

RÉDACTION DU JOURNAL

„Droschak“

GENEVE (Suisse)

„ՀՈՅ ՅԵՂԱՓՈՒՄԿԱՆ ԳՆԱՆԱԿՅՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՊՕՒԻՍՂ ԵՒ ԳՆԱՆՈՒՆԵՐԸ

Խրատական ու միաժամանակ խորապես վճատեցուցիչ է մասնութեան, Տասարակական ըմբռնութեան հիմնաւորը հակադրութիւնը, որ գոյութիւն ունի Պօլսի ու քաւասանների մէջ։ Ղեկավարելու, առաջնորդելու, խնամելու հուշան կենտրոնը, որ ազգային ներքին հոգեկան կենտրոնի վարիչ մարմիններն են բազմաձև «ազգընտիր» պատրիարքով, ազգային ազնուազնների ժամերին մեծ մասամբ ցոյց է տւել մի արատաւելի բժամատութիւն, բացարձակ ու խղճուն անճարտութիւն ըմբռնելու պատմական օրերի հրամայողական պահանջները։ Հայ ժողովրդական շահերի խղճմիտ լուսաբանութիւնը, նրանց առաջդրած գերազանցորեն կենսական խնդիրների լրջութիւնը միշտ խուսափել է «ազգային վարիչ մարմինների» կարողութիւնից և թիւրքահայ ժողովրդի ամբողջութեան, քաւասանական վաստակաւոր ու առաւելագոյն հայութեան անունից՝ ճամբարակող Պօլսի ազգայինները յաճախ երևան են բերել ազնուցուցիչ կուրուքիւն և բար անտարբերութիւն դէպի քաւասան։ Նրանք անկարող են հանդիսացել լսել հայութեան խղճմանքի հզոր ձիւղը, նրա սրտի փոփոխութիւնը, սեռնել նրա սրտի ցաւազին կեկուռներն ու հոգու խոյանքները՝ Հողի, վաստակի, բրտիների անուշ ու հեղ մրմունջը, ինչպէս և անհրաւումեան զեմ ծառացող ժողովուրդի ցարկոտ ու հզոր ազդակը՝ մեծաւ մասամբ անյուր և ձայնել Բոսֆորի փեղում և արածօրէն մարել է հայկական առփաստաններում ու խաւարումն ձորերում։

Սմիթայութեան, ազգայութեան և՛ազգայութիւն, թէ ազգայութիւն առկալարներ յարողաբար իբր են փոխանցել այսպէս հոգւած «ազգին ինձամակալութիւնը», ազգային սրահի պատերը թմբաբարել են անմեղ ճառերով, միշտ յանուն հայ ժողովրդի և անցել են կասաբան պարտի լրջուն գիտակցութեամբ։ Հզարա ու երջանիկ ժպիւտ չբնութեաններին, Նիզիլի, անգղային անգիտակցութիւնը հայ աշխարհի իրական կարիքները, մեծամիտ և ըմբռնաբացուցիչ արհամարհանք դէպի հեռու հայրենիքում լռելիայն աքնաղ ու ստեղծագործող ոյժերը, դէպի այն անանուն, անսուն, անփոքր ու ապերջանիկ

վարպետները մեր վազալարշարչուի, — ահա «ազգին ինձամակալութիւնը» ստանձնած ազգայինների ողբալի մասշտաբիւնը, ահա նրանց հասարակական արժեքը։

Եւ պատրիարքները, այս մեր հոյակապ ու պերճ Ամենապատիւները, միշտ ժողովրդաւոր, առկալար, հայ առաւելաներն ու հայ վաստակին խորապէս դիտակից, աւեր ու խոպան քաւասան շահերին հզոր սխոյան են բեր արատաւում են իրենց համաւաւոր Ռիսալ ու անգրանիկ խօսքը հուճ-Գոփուի Մար-Եկեղեցում, բայց բաւական է բազմեն պատրիարքական մեղի գահի վրայ և ահա ժողովութեան են ժաւնում վարժապետներ, Հայրիկի ու Երկաթէ Պատրիարքի կուռ աւանգութիւնները, ու նրանց հետ և՛ քաւաս և՛ առկալար սկզբունքներ, և՛ Հայ՝ և՛ Լաւալան Լաւալանաւ... Բիւրանգիտելու, մանր ու մեծ բանակներին այս լիար անդուն, իր նպովան ոգին հեշտութեամբ է սեղաւորում և հայ սեւազգիի վերարժուի ծաղկերում, զեռ երկի համեռ, պարկեշտ հոգևորականի համաւ վայելող կրօնաւորը գաւնում է մի ինչպիսի գեպոտ, սխորոէն յամաւ, անմարտի փառասէր և սմարաւաւուն։

Օրմանեան մի խրատաւոր անխրոնիզմ չէ, նա պոյսական վարիչ Թայֆայութեան, նրա գեպոտական շայտ ու նեղ ոգու սրպիկ արտայայտութիւնն է միայն։

Չկիւք կամենայ ծուռ հակապելր Մենք չենք, որ պիտի ներենք մեզ անգիտանալ անհաստական թէ հաւաքական ազնի ձիւրերը, որոնք երբեմն երբեմն Պօլսից մեկնելով փորձել են լոյս ու ջերմութիւն սփռել շողակաբա ու ցուր մեր աշխարհում։ Նախասեղ են նրա ցաւերը մեղմել, նրա վերբերը դարմանել։ Մենք չենք, որ պիտի փորձենք անհրաւորէն անհրաւ Երկաթ և Նազեցիւնը այն անշահախորհր կամեցողութիւնների շիտակի անգիտաբազ հոհաբերութիւնների արժեքը, որոնք հայ աշխարհի այս կամ այն անկիւնում երբեմնօրէն խոսցել են մեր լուսազոյն յոյսերի, մեր լուսազոյն ձգտութեան շուրջը։ Բայց պայտասական դեմոկրատիւնը, սխուր «ազգային» ինձութիւնը, որի սարկիների բարբառանքն ու ճարտարաբանութիւնը Ստանուի մի հաստիկ այնի մկիտց և Մուշի մի հաստիկ եղան բաւաւ շարժել, միշտ ձայնել է սիրապետող, կորաքամակ ու լրջուն հզորների մտ, ապիկար ու սեմար՝ մի լուս գործի առաջը ճարտար՝

փորձիկ նենգութիւններն ու բուռ ոտնձգութիւններն մէջ: Եւ արարաբարար, նա է թիրբբական բռնագնացութեան մէջ սնած այդ պոռուսական զազալինձութիւնն է, որ իր սուղ հոգով յաճախակի թառել է ժողովրդական առողջ կենսութեան նախաձեռնութիւններն, սակեղագործական ու ազատական ճիգերն, որչափ պաշարել թէ շինարարական բուռն տենչերի վրայ: Սանասարեան վարժարանի տեսուար արհեստը և կամիր-Օրմանեան ընթերցի մշտնաշարժին յեղեղութիւնները չափազանց պերճախառ պայտօցներ են՝ նորերը չփնտրելու համար:

Հայրիկեան կուռ ու հրապուրելի շունչը, զով բաժու պէս երբեմն փչել է պատրիարքական գահի վրայ, պահ մի հայ աշխարհի հուժկու ազադակը, ինչպէս մի հզօր մարտակոչ լայն ծփանքներով ներս է թափանցել ազգային սրահը, ծծառն հոգիները զնցել են ու դուրեցել, մինչև որ Մեծ Հայք իր ոտներն փոշին է թափանցել Գուռ-Գարուն և հովանեան զուպը ձեռքին զէպի վան ու վասպուրական ճամբայ ընկել—ու նորից պոռոտաստ, գասարկարան ազգայինձութիւնը իրեն արժանի պատրիարքներով ձեռք է առել զպէսն Կապուստիկը Ի փոխու հայ աշխարհի:

Յարիներ ասրիներ յեանկից թուազուր անցել են, որ հասկերներով հարուստ և սքովիչ յայտերով այնքան մշտա սեր գոյեմով պատմութիւնը գահավեժ ու շշմեցուցիչ հրապարակ է նետել հայ ժողովրդի սմբողջական գոյութեան զարհուրելի սակեղանքը, հայ աշխարհը ապրել է սիեզերքը սահմակող և զգայուն հոգիները մտածուով բաժող սակութեան և այդ գերագոյն ժամերին իսկ, ազգային վարէջ մարմինները, այդ կորաբաժակ և գիտունիկ ազգայինները շարունակել են իրենց աշխատանքայիններին մի երբանիկ ըթմանութեամբ ոտնա հարելով, կաճակունկով գաւառի առողջ ու անկական ճիգերը, արհամարհելով նրա իրաւունքները, անգիտանալով նրա հրամայական կարգերը:

Գարեկ էր կարծել, որ վերջին ասրիներն հասարակական և բազմաբան փոթորիկները, որոնք հիմնովբե դարերին զարբերից Ի վեր իշխող ընթանումներն ու մզլած աւանդութիւնները, պիտի կարողանան նաև բուսփորի սփերով զգաստ ու իմաստուն մի միջնորդ սակեղան և իրենց տեսահանող, առողջ շնչով սնան գնել հին ընթերցի զգեղն ու բուժ մասնութեան:

Գարեկ էր կարծել... բայց ներկայ պատրիարքը, Յեր Զաւեն ամենապատիւը եկու, եկու էլի մի աւելորդ անգամ ապացուցանելու, որ միասութիւն է գաւառի վերածնութիւնը, նրա իրաւունքներն յարգանքը, նրա անմիջական կարիքներն ու ցուերի գործանքը յօպից անկապելու, որ եղան է Սեղալին Յաճմանագրութիւն՝ կուսած բառակուտ անիւներով սայլին ազգային բախկապել, աննրբելի յանցանք է աչք անկել Բուսփորի սփերին և տխարեցի բարբ և վերածնութիւն անկապել

նազմուրդար հայ աշխարհին: Զաւեն սրբազանը, որ իր հոգեական իրաւունքները այն սասիճան աւարկայական իմաստով է իմրանում, որ կարողանում է պատգամաւորական թեթեւանուններ բաշխել, գաւառներին, ինչպէս մի արեւելեան բունպետ կը նշանակեր իր սասարակները, զսահմանագրական այս պատրիարքը, որ սահմանագրութիւն անելով հանկուտում է իր կամքը և ժողովրդական ընտրութիւն անելով իր բնահանձրը, ինքնին մի տեսուար և յետագարձ շարժում է զեպի Օրմանեան ընթերցի, բացերես ու յանդուգն ուրախարում ժողովրդական իրաւունքներն, որպիսին երբեկցե փորձել է որեւէ պատրիարք:

Զաւեն սրբազանը, որ գեւ երեկ գաւառից եկու, յարթական կամարներն ապից, ամբողջ իր ճամբին գաւառի ցուերից, գաւառական մտաւան, անտեր ժողովրդի իրաւունքներից խօսել, որպէս կ'աներ մի Հայրիկ, մի Եղիշիւնու: Եւ ահա պատրիարքական գահայի վրայ երևան է հանում Գուռ-Գարուն այնքան հարազատ, այնքան ընտանի, հինա ուրց փորձիկ պոլիտիկանին: Մի՞թէ գաւառ է գաւառական ժողովուրդ, առապազը, վաստակուր հայութեան հազար ու մի ցուեր, նրա ոտնահարած, արբուած իրաւունքները ոչ այլ ինչ էին սրբազան ընթաններին, եթէ ոչ զոյնզոյն իրաւունքները փող ու շուք առուլ էր փոխելն ու սակեղան իր շուրջը մի հրապար, որ իր երեկ անկարող էր եղել նրան հայութիւնը: Եւ Մի՞թէ Պոլիտը այդպէս արագ զգալ տեց, որ չպիտի հանգուրծէ մի պատրիարքի, որ գալիս է գործելու յանուն գաւառական ժողովրդի և որ Գուռ-Գարուն Բուսփորի սփերունն է ոչ թէ վասպուրականում կամ Յարսունում և բունգասանց պատրիարքին իր ուխտը մտանալ, վասն զի՞ *Paris vaut bien une messe* — «պատրիարքական գահը մի ուխտագրութեան արժէ...»

Յուսանք սակայն, որ ամենապատիւ սրբազանը մի տեսուար թիրիմացութեան մէջ է, եթէ նա կարծում է, որ մեր օրերում հնարաւոր է այդ սասիճան *sans genre* ու խազալ ժողովրդական իրաւունքների հետ, հեգնել ժողովրդական խզմանաւոր և միանգամից քանի մի սարով ըստ իր բնաց յետ մզել ժողովրդական գիտակցութիւնը, խղճուկ պոլիտիկանութեան թանձր փոշին ցանել ժողովրդի վարժանք զգաստութեան վրայ: Անցնալի գաւռ փորձերը և հայ առաւայտը գաւառներում ձուլել են ու կերտել մի սերունդ, որի կուռ կամքը, հզօր ու առողջ ընթանները և իր իրաւունքների յստակ ու իտրունիկ գիտակցութիւնը վազուց հետ նրան գրել են պոլիտիկան մեղդութիւնից ու զեփեկութիւնից շատ բարձր Այդ հազար, անընկճելի սերունդը պիտի կարողանայ իր իրաւունքներն զգով նիւթած բուլբուր գաւառն ի զերև հանել, պիտի կարողանայ իր հզօր, ազնիւ ձայնը լսելի անել իր գիտցած ձեռք

պիտի կորոզանայ իր վրոյից ԹԹԹԻԿԻ պոլսական անպատշ ինամակաութիւնը, որ սուել ու անել է ԹԻԻ-քական բանապետութեան մէջ և որ իր մէջ կրում է մահացութեան բոլոր ստղծերը: Եւ ահա այդ կենսայի, ԹԹԹԻԿԻ ու զգաստ սերունդն է, որ այսօր սփռւած էր անբնակարարի, ներքին իրաւունքներն է պահանջում բարձրաձայն իր բողոք հնազանդութիւնը:

Եւ յետոյ, այսբանով վերջանում է արգեօք պատերազմի և նրա շուրջը համախառն յայտնի և անյայտ խմբակի պատասխանատուութիւնը: Այս սագ-նակալի օրերում, ուր հայ ժողովրդի կամքերի կուռ անդրջութեան, իղձերի, յոյսերի և գործելակերպի ներգաշնակութեան այնքան հրամայալի պահանջը բացարձեւ պէտք չունի, զգում է արգեօք աննպաստի սրբազանը, Թ է իր շահագրգռած խորհրդակցանքերի ներշնչմանով ընտրելով երկրիս, անշիտակ, գործունեութեամբ ուղին, ինչ ծանր հարւած է հասցնում ազգային գասին, հայ ժողովրդի այսքան դժգոհ զհարեւորութիւններով ձեռք բերելիք փրկարար գործին: Բարոյական պատասխանատուութեան, սարքակն սարտքի, մարդկային արժանիքի, ինչպէս և իրաւունքի ու արգարութեան մասին խիտ ծուռ, խիտ կապակցելի գաղափար պէտք է ունենալ այս աստիճան ըմբոսացուցիչ, ազգաւեր գործունեութեան համար անկենդանի լքի մեր օրերում, մեր պայմաններում: Վրդովեցուցիչ է, անհասկանալի է, որ ինչ զինքնին «ազգային կամք», «ազգային խղճմանը» հռչակող վարել մարմինները համարաշխութեան այնքան բեղմնաւոր, այնքան պատկառանք ներշնչող գաղափարը այսքան անխղճօրէն իրենց գնում, անպատիւ նպասակներին ծառայեցնեն: Չզուգնի է մասնել, որ վարել մարմինների մութ շահասակութիւնների, ստոր ինտրիգների շնորհիւ այսօր պարզամտական անխառնակ աթոռների պայքարը գոյ մթազնեղու ազգային գասի շուրջը զեռ երկի երկիւղածօրէն հսկում կատարող ազգային յստակ, ազնի զգաստութիւնը: Արտասելի է մասնել, որ զեղծմանը բոսփօրի արեքին ձեռնող ազգայինների համար ազգային համերաշխութիւն նշանակում է պարզամտական աթոռին կապւած ինտել սոխի անասակների բաշխումը ըստ ըմաց և ըստ կամաց մի մարտական պատերազմի:

Ո՞ր ձեռք համերաշխութիւնը...

Ո՞չ, շահաբաշխի ազգայիններ և գուր բոլորդ, որ պարզամտական ձեռք աթոռները տառապող հայ ժողովրդի կրքին կուզեք զնել, ո՞չ, գուր խորունկ ու գիտակցական մոլորութեան մէջ եք և պէտք ունիք զգաստանալ: Համերաշխութիւնը պէտք է հաստատուած լինի պարտքերի և իրաւունքների արդար ներգաշնակութեան, իմաստուն բաշխումի մէջ համազ-

գային վերածնութեան մեծ գործի շուրջը: համերաշխութիւնը պէտք է հաստատուած լինի դաստապական վատասակար, բրտաթոր ու արեւնաքամ ժողովրդի իրաւունքների ու շահերի յարգանքի վրայ: համերաշխութիւնը պէտք է իսպառ ազատ լինի մութ, գնում ձգտումները, որոնք Թագցնում են կապակցելի անորժակները, անաբգ ստորացուցիչ շահանդրական կամ փառասիրական նպատակներ: Ահա այդ գերազանցապէս ներքին համերաշխութիւնն է, որ դուք վարկապակցիք պատկառում սերմանելով աջ ու ձախ:

Եւ Թող պատուութիւնը ձեզ դասի, իսկ հայ ազգը, արժեացած ու գիտակից, յուսած պիտի կորոզանայ այսուհետեւ իր տառապանքն ու արեւին դասը, իր հոխտուած, կրճատած իրաւունքների դասը ինքը վարել առանց ձեռք ընչաբազց ու վտանգաւոր հովանաւորութեան:

Գուտարի և կենտրոնի մէջ վիճել լայնացնողները իրենց իսկ վարկի ու բարոյական գոյութեան գերեզմանն են փորում:

Եւ իւր է, որ այդպէս է ժամանակ է, որ գաւառը տեր դառնայ իր ճակատագրին, իր իրաւունքներին, իր զգախա գոյութեան:

«ՅԱՆՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԹՎՅԵՐԻ»

«Ազգային մեծութիւն, ազգային կենսական շահեր»... Ահա զեղիւններ, որոնք մեր օրերում իշխող, անհոգի գասակարգերի ձեռքում դարձել են խաւար արեւունները վարելու ու տիրապետելու հասող զենքեր: Եւ այս անգամ կողիական իրականութիւնն է, հայ-վրացական դարաւոր հարեւանութիւնը, որ այդ երկույթի մանեն յայտնում, անենեն տխուր ապացոյց է բերում մեզ: Մի եռանդով, որ շափազանց վրան բաց է տեսաւոր շեփտելու համար, հայ և վրացի ժողովուրդները յանկարծ մասնաւոր ինամքի ու հոգածութեան առաքելայ են դարձել և նրանց անունից հրապարակ են իղել ու կատարել պայքարի մասը մի կողմից հայ բուրժուազիան իր ապագային իտելիզացնելով և միւս կողմից վրացի պղերգ ու վառաւեր ազնականութիւնը: Անիթը—մի հայ գրամատեր կարւած է զնել Մայր Արաստանում և յվերական հայրենիքի ամբողջութիւնը ընտել» ու միտժամանակ կովկասեան վարչութիւնը որոշել է Թիֆլիսի պոլիտեխնիկումը փոխանակ վրացի ազնականի հողի վրայ կառուցանելու, տանել հայկական մասին ժամ:

Եւ ահա՛ *Hannibal ad portas!* վերական աշխարհի վրայ փոռւած է իր փրկարար ինամակալութիւնը վերական ազնականութիւնը և նրա հանդէպ կողմ ու պատրաստ ցցում է հայ բուրժուազիան, նոյնպէս իր բարձր հովանին փոխելով հայ ժողովրդի վրայ:

Կեզ չափազանց լաւ է յայտնի այդ տնօր ու գար-
 շեղի խնամակալութեան արժէքը, մենք շատ լաւ գիտենք
 նրա անխնամակալիչ հետևանքները, որպէս զի այդ վտան-
 դաւոր պայթարի առաջ լուծք և ուժովների խարանը
 չընենք յանցաւոր ճակատներին: Խնամակալութիւններ
 կան, որոնք տարածներ ծօրն անհուն, ծանրացան են ժո-
 ղովուրդների թիկունքին, որպէս ճակատագրական անձեք,
 և զարից զար, սերնդից սերունդ փոխանակուած են
 հազար ձևերով, հազար գոյներով, բայց միշտ թշու-
 առութիւն ու աղէա ստեղծող մարգկային անգիտակից ու
 զհրահաւան զանգուներին գլխին: Անօրոս ու ապար-
 դիւն աշխատանք է փորձել արամաբանական, արգար,
 իրաւական հիմունքներ փնտրել ու այդ մարգկային խն-
 մակալութիւններին, նրանց տխուր գոյութիւնը պայ-
 մանաւորող պատճառների մէջ խզի, շքմարութեան
 թէկուզ, մի նշոյլ որոնել: Ամեն սեզ, ուր հասարակա-
 կազմը հաստատուած է գրամի, որի է աշխատանք
 սղանաւորութեան տիրապետութեան վրայ, ուր մարգ-
 կային տխուր հօտերը մի բացերն անպակառու-
 թեամբ անլուծ, արորում, շահագործուած են պէրզ,
 անվասակ փորձածութիւնը պարտաւորեցնել համար,
 ամեն սեզ, ուր իրաւազորի մասաները շարունակուած
 են բնամտորն յորանքը ու որոճալ, այդ յիւնամակա-
 լութիւնը՝ կայ և գործում է, աւերում ու չափում
 յանուն ազգերի փառքի ու մեծութեանն:

Կեր օրերում, գրագիտութեան, ապագրական խօսքի,
 գրքի իշխանութեան այս փառաւոր շրջանում թուած է
 արտառոց, ըմբոսացուցիչ հասարակական այս աղէաւոր
 երևոյթը: Բայց նա կայ, նա իշխում է միահեծան
 ի զհեւ հանելով մարգութեան լուսադոյն զաւակների,
 իմաստուն, զգաստ ձեաներեցութիւնները, փշրելով ամ-
 նակուս կամբերը, զլաստելով ամենաազնի ճիգերը, որպէս
 հազարգլխեան մի վիշապ, որ իր պաշ օղակների մէջ
 սղում, ճիւղում է վտասակաւոր մասաները, լիզում է
 նրանց բարկ բրտիները և մուշում միշտ յայնուն ազգերի:

Եւ որչափ մեծ է ու անպարփակ տիրապետելու,
 վայելելու տնօրժալը իշխող զասակարգերի, որքան
 յախուսն նրանց հեշտատիրական անարգ կրքը, այնքան
 աւելի անզուգ, աւելի քանձաձիկ, ինչպէս և աւելի
 նենգ նրանց գործունեութիւնը և այնքան աւելի բարձր
 են հոչակում նրանք յայնուն ազգերի՝ նշանաբան աւ-
 բոնեների զարթնող զգաստութիւնը մողրեցնելու համար:

Պատուս ուս ժողովրդի՝ է, որ պարիչկիւնների սև
 հօդաւանդը անասնական բնամտութեամբ կազմակեր-
 պում են պօքոճները, յշի կանանց փորերը պատում է
 և ծերերի ու մանուկների գանկերը փշրում երկաթի
 լակտերով, յայնուն մահաբազան ժողովրդի՝ է, որ ՚հին
 ու նոր՝ թիւրքեր խօգտութեան անասնի տեսարան-
 ներով պղծում են պատմութիւնը, յայնուն կոճկատեան
 ողբալի թաթար խուճանի շէր, որ 8—9 արքի առաջ

վայրագ բեգութիւնը ձեռք ձեռքի աւան ուսական
 վաճառուած պաշտօնեութեանը հուր ու սրի մասնեց
 ամբողջ ծաղկած գաւառներ:

Եւ բազարակիրք արևմուտքում, նոյն վտանգաւոր
 դեփիզը չէ՞, որի անուծող խաւար արժոյնների ազգա-
 մոլայան, մութ բնազգներն են հրահրում տիրող հզոր-
 ները, աշխատանքը հիւժուած ու բաւում արբըլու գասերի
 վայելքի համար և ժողովրդական արևունքարտիք արև-
 տեսութիւնը զինուորական ու դրամատիրական գիշատիչ-
 ների անյագ որդերը թափում:

Պատուս ազգերի՝... սմեն կողմ քեն, սի, ոճի,
 համայնական բազմազան թշուառութիւններ: Եւ իսկական
 ազգերը, — աշխատաւոր, սքնող վիթխարի մասաներ —
 սողում են հանքերի խաւարքին, մահասարուս ան-
 զունցներում, սև հողն ու ժայռերն են շանգում միշտ
 քաղցից մուշուող և խանձարուրից մինչև գերեզման
 արորում, մուշում ու փում են աննայր ագիտու-
 թեան, աղբի ու անձարակ խեղճութեան ճիրաններում:

Ահա այդ անիւնած խնամակալութիւնը, որ աշխարհի
 հզորները, ծագումի ու զորամի անհայրենիք, ապազգային
 փորեցնելները վարդաբարեն գրեւ են առաւակող ժող-
 վուրդների թիկունքին:

Ահա այդ ժանիքաւոր խնամակալութիւնը, որ յայնուն
 հայ և վրացի ժողովուրդների չափազանց կասկածելի
 եռանդով յանձն են առել թիֆլիսի հայ բուրժուազիան
 ու վրացի ազնուկանութիւնը և ճշիճմ, անարի, վառ
 մատուլը իր գրգռիչ զառանցունքներով ամեն ու խորա-
 ցնում է այն վիճը, որ երկուստեք տիրող զասակարգերը
 փորում են երկու բախակից ժողովուրդների միջև. ու
 սև հարիւրակային մալայութեամբ ազգորւած ուս չի-
 նօթիկութիւնը շփում է ձեռներն ու ժպտում իր մա-
 քիաժկեան ժպիսը. *divide ut imperes!*

Արացի ազնուկանը, այդ հոյակապ պրոտարոյքը, որ
 գարեկից ի վեր վնասելի պէս ծնում է վրացի աշխա-
 տաւոր շինականի արիւնը, որ նրա զաւակներն է ի վա-
 ճառ հանել իր կալածական աւորը շորթելու համար,
 որ ոչ միայն իր հայրենիքի պատանները, այլ ամբողջ
 Արաստանը պատրաստ է անուրտի հանել, եթէ հնար
 ունենայ, միայն թէ կարողանայ իր ցոյգ, ունայն ու
 տխուր արդութիւնը յարտաւել զայդ վայելքի անձ-
 նատուր, այդ ֆիզիկական ու բարոյական անտիրանիքը,
 բաւութեան օրերի այդ աշխատուած թափփուսն է,
 որ հրապարակ է եկել վիրական հայրենիքն ու ժող-
 վուրդը իր խնամքով երջանկացնելու եւ հայ բուր-
 ժուազիան, հայ անհոգի դրամատերը, գեւ երեկ արեւ
 խաւոր և փափախաւոր, այսօր եռանդով լնում է հայու-
 թեան յետին նշոյն իր անից, ազաւաղելով իր անուճը,
 արհամարհելով, անարգելով իր լեզուն, իր ծագումը,
 օտարի, հզոր առաջ գաւառին փրսող հարաւոր միջա-
 վայրում մի կատաղի զաղան, որի զեփլն է եղել միշտ

ubi bene ibi patria (ուր շահ—այնտեղ հայրենիք), նա է մրցութեան մտել վրացի ազնուական հետ կառավարական բարձր պաշտօնեութեան նախասննեակը սիրապետելու և իր ընդհանր լավերենքի ժողովները վայելելու:

Եւ Քիֆիսի այսպէս կոչուած «հայ ինտելիգենցիան», հայ գրականութեան, հայ լեզուի, հայ մտքի այդ թանձրամիտ թիչամբն, ամենէն սխաւր, ամենէն արտառոց պատուը պետական արտաւորել: այլապէս զատառարկութեան, որի տեղի գուրս է վաճուած բոլորն՝ ինչ հայկական է և որի երեխաները օրօրօցից թաթովում են ուստերեն, ասհա յայ ինտելիգենցիան է, որ յանուն Արարիկի և Ջուզեպպուրի կիսաբաշխած, սկիւր հայի՝ նիւզակ է ճանձում Քիֆիսի պոլիտեխնիկումի տեղի համար:

Եւ չնեղաւ մեկը, այդ զգուցի պայթարի ընթացքում, որ բարձրաձայն ճշար գուրսը այլօրից շշուած վրացի աշխուհանին և քաղաքային վարչութեան կարկանդակը կրծող բոլոր ազգային փարիսեցիներին, որ ամբողջ այդ պոլիտեխնիկումը աւելի բիշ արժեք, քան Քութայիսի, Ալանթիսի և Վրացի գեղրուկների և Լուուս ու Ղափանի հայ շինականի գարաւոր աշխիւ բրամբը, որ ղափում են բոլոր հին ու նոր, կոնակաւոր ու անկոնակ պորտաբոյնները: Եւ չնեղաւ մեկը, որ ճշար նրանց երեսին՝ «փարիսեցիներ, յանուն այդ սքնող, սառապող աշխատաւորներին, յանուն այդ հիւժուած, բամուած խեղճներ, գուք թոյն էք քամում նրանց հոգիներում և մի տխուր մոլեգնութեամբ իրար դեմ էք հանում բերօկրատիայի և ձեր անարգ լեծ ասկ հասարակութեան անմշտաւ ճախտակից ազգերը»: Գնեղաւ մեկը որ համարձակ ձեռքով յեա քաշեր պոլիտեխնիկումի շուրջը ունացող կրթական խուճաթի դիմակը, ազգամուտական այդ որգիւն իր ծագման մէջ խեղճ էր և թոյլ չտար, որ հայ ու վրացի աշխատաւորի անունը այդքան անպակաստորն շահարձեւեր, բանի որ կողմասեան բարձր կրթական հաստատութիւնը ո՛չ հայ շարքաչ գիւղացու համար է և ոչ վրացու, այլ միայն և միայն ուս ջնիւթիկութեան, վրացի ազնուականութեան, թաթար միլիտանտեր հաջիւնրի և հայ բուրժուազային, այլապէս երբէք բերօկրատիկ կառավարութիւնը չզոյտի թոյլ տար այդ կարգի հաստատութիւնը կողմասուս:

Ահա մերի, անողորմ ճշմարտութիւնը, որ լայն եփանքներով պէտք էր փոշի կողկասեան վաստակաւոր ժողովուրդներին խրճիթներում և ո՛չ ասելութեան, բինուսին մահացու թոյնը, որի ազդուրը Քիֆիսի քաղաքային ասունն է և խորոզները հայ ու վրացի ժողովրդի անկուշ, կասկածելի խնամակաշները:

Այ՛, վրասկան հայրենիքը պէտք է խոտի վրացերեն, նրա ներթափան հողը պիտի ցուգի վրացի շինականի քրտիքներով, այդ բրտիքն արդիւնքը պիտի վայելչի միայն և միայն նոյն ոշխատաւորը, և միջ համար մարգրութեան տակաւնքն է այն կաշխատաւոր թաւաղը,

որ այդ գոթախա ու հմայիչ հայրենիքի պատասաները ի վաճառ և հանում իր վայելքի համար, մի վիւզգեր շահագործող է այն հայ կաշխատաւորը, որ գնում է իր թամբը դնելու վրասկան հայրենիքի այդ թաթուուս այդ արեւոտ կտորի վրաս: Նոյնպէս և հայ շարքները ներթափան հայ մարդու արեւոտ ու քրտիքով պէտք է իր ետցում միայն հայ գեղըղիկ վաստակը, լեղուն, հոգին պէտք է բեղձաւորի, որդիս գթաւասա մայր պէտք է միայն իր հարազատ զաւակների խոնմարտերին ու հոգեվարքին ժպտայ իր խնգութեան ու կարեկցութեան ժողաւը և ո՛չ մի խորթ կամբ ու ոճրագործ ձեռք չպէտք է գայ բրտարեն խոնգարելու, աղաւաղելու մոր և իր զուակներին հոգեւոր գերագոյն, շքեղ ներդաշնակութիւնը:

Պաշտմական և անպաշտմ բոլոր յիմամակաւորութիւնները՝ այլ ևս տեղ չզոյտի ունենան ո՛չ Հայ Աշխարհում և ոչ Վրաստանում: Հազար հազար տարիներ պատմական դատան ճակատագիրը եղբայրութեն ապրած հայ և վրացի ազգերը էլի պիտի սպրկեն հազար տարիներ կողքի կողքի, ո՛չ անմիտ, յանցաւոր, փոխազարձ թշնամութեան համար, այլ իրենց սոսկագործական հոյակապ ճիգերը, իրենց օրհնած բեղձաւոր քրտիքը իրար խոնքելու, յանուն ազգերի իրական շահերի, իրական մեծութեան, յանուն արգաւորութեան և իրաւունքի յաղթանակին կողմասի գեղաձծեալ երկրների ստի:

ՈՆԱՅԳԱԿԱՆ ԱՐԵՒՐԸ

„Առաւօտն իրճակն է քայ,
 „Մ՛, Է՛լ արեւը Հայաստանից՛“...
 ՆԱԶԱՊԵՏ

Ընկերներեցս մեկը, որ ինչ պէս սարագիր ու աստանդական տարիներից ի վեր այս ցուրտ, անհոգի արեւմուտքում իրուր փնտրեց տար, պարտիչ արև, վերջի վերջի հայրենակալութեամբ մի հզոր իշխով Յարան ու Վասպուրական սպասանեց: Ըող ու լոյսի կարտ աղան, որի հետ յաճախ էրիք մրձեղացել ցուրտ, լամպրետտ օրերին Մ. Սեփարնիցի ցուպգին, մահամեքն ուղեւոր արեւին՝

„Բարի՛ արև, շողա՛, շողա՛ հիւանդ եմ“...

մեր ցու ու զուլումի աշխարհը գնաց իր սրթութեացող հոգին ու մարմինը ջերմացնելու Հնարաւոր է, մասնում էի ինքս ինչ, մեր աշխարհի մասը հորիզոնում հնարաւոր է թեկուզ մի հաստիկ ժպտուն ցոլը: Երբ խինգ ու ժպիտ վաղուց հետե մարել են ու տեղի աւել մի անյոյս մույլի երկներում ու երկրի վրայ

Ու սպասում էի իր արունընկերին թէ՛, «Մըսում եմ, մըսում եմ, հայ աշխարհում ամենքն են մըսում... Եւ այժմ՝ ցուստանը չեմ հայրենիքից, որ գարեւր շարունակ արևնի մշուշի մեջ հեւաց, ուր արևի ցոլքերը

ստեղծւոյ մարեցին եթերում, առանց արեւնազանգ հողը լիւզելու, ընկերս գրում է ինձ.

դեռ ամեն օր ջինջ երկնակամարի վրայ բարձրանում է Հայկական Արևը պերճ ու Նազելի, լոյս ու ջերմութեան ծովով ողողում է ձոր, դառն ու լեռ. ու նրա շողերը որպէս խորձերով ընկնում են արգաւանդ երկրի կրճերն, որպէս կեանքի թրթռուն կաթիլներ. և լոյս ու ջերմութեան ծարաւ իմ հոգին լողում է նրա կենդանացուցիչ բարուէս ցոլքերի մէջ. ա՛հ, վերջապէս աստուծոյ, կենդանացոյ, փա՛ռք բեզ, ո՛վ բարի, ո՛վ շքեղ Արևդ Հայկական”...

Ա՛հ, ի՛նչ օրանշելի, ի՛նչ սրտապարտ անկնկալ այս նամակը...

Շնորհակալ եմ տարագիր ընկեր, ո՛վ իմ արևապաշտ բախտակից. ճառագայթների մի փարթում փունջ էր, որ այս պաղ ու անհոգի արևմուտքում իմ հայրենուաննչ ու ցրտասար հոգու վրայ ցանցեցիր. Բերկրանքի ու Յոյրի մի լաւ, հասուէտ ժպիտ, որ իմ գունտա ու խեղճ երազների վրայ թրթռացրիր:

Եւ ահա օրերից ի վեր ինձ համար մի հմայիչ յանկերգ է դարձել իմ հայրենի աշխարհի սեգ, հպարտ բարձունքները, բեզուն, երազական սափաստանները սոկեզօծող արևի այս զեպուն փառաբանութիւնը: Ազգրում իմ մենուար թափառու ձեերի արտուժ ժամերին ու ասան՝ սենեակիս առանձնութեան մէջ, սիրում եմ ինքս ինձ մրթնալ. «Փա՛ռք բեզ, ո՛վ ողորմած ու շքեղ Արևդ Հայկական”...

* * *

Աւ ես հասկանում եմ հեթանոս հայի յստակ, մանուկ հոգին, որ դարեր շարունակ փարած թոյց հայկական մշտածպիտ երկնքի լոյսին ու ջերմութեանը, որպէս մանուկը իր ձոր սանքներին և արևից, «Հայկական շքեղ, ողորմած արևից», բաշեց իր ամեննե հուժիտ, ինչպէս և ամեննե գողտրիկ ներշնչութեանը. պայքարեց ու աստուայեց լոյսի համար, օրհնեց ու փառաբանեց լոյսը, ծուռնիկ եկաւ, իր հոգին փոքեց լոյսի առաջ և իր ամեննե պերճ, ամեննե բնորոշ երգերը երկնքի շողերից հիւսեց:

Աւ ես հասկանում եմ հայ շինակամին, որ մեր կեանքն ու աշխարհը փոթորիկող բոլոր արհաւիրքներինց, բոլոր զուլուձեերինց յետոյ, ստեղծագործական մի հզոր քիզով իր խոհուն, հողագոյն ձակասը բացած՝ վերստին երկնքին նայեց, Հայկական շքեղ ու բարի Արևին, իր հոգին նրա սակի ցոլքերով ցոլեց, նրա կենսատու շնչով իր եռութիւնը, իր ողջ եռութիւնը ծառայու գործ ու վաստակի համար, ապա համարանկ ու հպարտ՝ վերստին իր ներհաման բրտինքը յուռթի սփռուների մէջ թափեց, վասն զի վերից մաղւում էին «Հայկական Արևի բարկ շիթերը, որպէս կեանքի թրթռուն կաթիլներ»:

Հասկանում եմ նաև կարմիր եղեռնից խուսափող ամբոխների վիթխարի հառաչանքը ստոր ցուրտ հորիզոնների սակ հայկական շքեղ Արևի համար, որ միշտ այնպէս ողորմած է ձորանը խեղճերին, այնպէս սիրազեղ դարձանը, երբ մայր երկիրը իր փարթում կուրծքն է բացել նրա շողերը գրկելու, այնքան ստանական ու կուրովի ամբանը և արեան շուռլ ու երազական, երբ աշնանը պէտք է քրտինքն ու վաստակը սոկեզօծել:

Ա՛հ, այդ կարեկից ու այդ սնուշ Արևի մոլորած ու գալուկ մի ցոլքն եմ տեսել մի օր խուճապով մեր սահմաններն ընկած մանուկների աչքերում. թախիծը մի երազ-արևի, որի պայծա ցոլքերի սակ հայրենի բուրբների ու լճերի կապոյտը երեքը պաղ մշուշը լպարուրեց, հայրենազուրկ փոքրիկ սրտակներ, որոնք իրենց թոյց հեծեկատանքները կուլ որսող՝ մի ցուրտ ու աստուկ օր ցրտասար մարեցին անհիւրընկալ, անողորմ աշխարհներում, երբ հայրենի արևի վերջին ցոլքը նրանց թախծոտ աչքերի մէջ մարեց:

* * *

Աղեկաւոր, անողորմ յուշեր. ահա ես կը ջնջեմ ձեզ յոյսերով թրթռուն իմ ցաւած հոգու ծալքերից: Ինչու՞ խառնել անծպիտ երկկի մոխիրները և մի անօգուտ ու անզօր ցաւի արցունքներ թափել վերստին նրանց համար, որոնք բախտի թանձր կրուսկների սակ անգթօրէն ձեւեցին ու անցան:

Ի՛նչ փոյթ, թէ վերաւոր ու ձգազկտոր է մի անբող ժողովուրդ բարբարոսների վայրագ հարուսների սակ. ի՛նչ փոյթ, թէ ինչպէս սփռում խոզխոջեց և մաճ բունդ աղնի դասակը փշուրեց. թէ հայրենի խրճիթի գալուրուն ծուրը — յաւեանական օրհնանք երկնքին — սուգի բազով վաստակաւոր ձակասների վրայ իջու անյուսօրէն:

Ի՛նչ փոյթ, թէ նդոված եղեռնը էլի մի անգամ, որպէս վիթխարի, արևմտախառն հրէշ, մեր կորովի քիզերի դէմ առաջանա և արևնի մշուշը պահ մի մեր լեռների վճառ կապոյտն ապականեց, մեր հոգիների վրայ սև անձրևի պէս սև լքուձ իջու մեր ծուսուած յոյսերի պատանն ուսերին:

Ի՛նչ փոյթ, թէ աներեջ մրրկի շունչի սակ մեր հայրենի անասունները էլի՞ մի անգամ ցաւիկնօրէն հեծեծեացին ու հաստաբուն կաղնիները սխորօքն կուսցան, թէ բարբարոսների ձիերի սմբակների սակ մեր արգասանդ անգ ու անգաստանը աստայացան, մեր ընտիրները պարուած՝ կոխան եղան խուժաղուժ ամբոխների կատաղութեանը և գահավեժ խորտակուսների փոկին պահ մի մեր հորիզոնը միագնեց:

Ի՛նչ փոյթ...

Ձե՛ Հայկական Արևը կայ երկնքում բարի, ողորմած ու

չքեղ — ու այնպէս բարձր ու այնպէս անմատչելի բոլոր բբու-
նուծիւններին — որ լոյս ու ջերմութեան ծով է թափում
Հայրենի աշխարհի վրայ: Երբ բարկ շողերը լիզում են
ցուրտ մշուշը և արին-բրտիքով ցողան մայր-երկիրը
վերստին պիտի ծաղկի ու փթթի, որպէս շքեղ հարսը,
որի յուսթի կողերի սակ թրթռում է վազլայ սե-
րունդը կուռ ու անխորասկիւի չզոր, հրաշագործ արև,
որ շողողում է հայ շինականի հեղ ու բարի աչքերի
մէջ, գուրգուրում ու համբուրում է Երա թրտնաթոր
ձակասը, բոց շիթերով խաղում է երակների մէջ, Թափ
ու իմաստ է տայի Երա բազկի շարժումներին և ինչ-
պէս արշալոյսի բիւր երանգների հրգեհր բարձունքների
վրայ, այնպէս էլ վարսնոս հոգիներում վառում է
յոյսերի ու առնական անշների արգասաբեր փթթորիկը:
Ա՛հ, բարի արև, շողա՛, շողա՛, փայլատակիր բոլոր
հոգիների մէջ, ուր դեռ սև լքունն է իշխում ծւատ-
ւած յոյսերի պատանն ուսերին:

Եւ այժմ ձե՛զ եմ յիշում ո՛վ Հայրենակարտ վա-
րանդներ, որ արև-երանդներ ու ծաղիկ-յոյսեր ունիք
ձեր հոգիներում: Զե՛զ եմ յիշում, որ օտար, ցրտաշունչ
սփերում, որպէս ցնորական, գողար վերյուշ, սակաւին
սպրում էք ձեր խանձարուրի վրայ շողշողացող հեռա-
ւար կախարդական արևը և ձեր էութեան բոլոր Թա-
փով բնազդորէն, կարօտակէզ դաւակի պէս պատրաստ
էք նեւաւել գեպի բարի, ողորմած արևը Հայրենի: Զե՛զ
եմ յիշում և ձեզ հետ միասին բոլոր Երանց, որոնք
ցուրտ ունին հոգիներում, ցաւ՝ սրտերում, կրօտ՝ աչ-
քերում և որոնք սննուում են ջերմ, պարարիչ ձառա-
գայթը Հայրենի:

Հայկական մշտավառ Արևը փայլում է իր բոլոր վե-
հափառ պերճութեամբ և հայկական հողը սև ու փառ-
թամ՝ թրթռում է Երա բոցոտ գգականների սակի:

Արև ու հող, բրտիք ու շող, ահա դարուոր գողա-
նիքը բու կուռ գոյութեան ո՛վ չարատանի, ո՛վ երկաթ
ժողովուրդ:

Եւ քանի փայլում է Արևը երկնքում և արգա-
ւանք է ձողը ներքևում, ես հաւատում եմ, որ դու
Երան պիտի բարձրունաս պերճ, հպարտ ու յաղթական,
ո՛վ լուսաշող, ո՛վ գեղանի Հայրենիք:

Գ.Է.Տ.

«Առաւօտուն գունահիւ է բաց,
Ե՛լ, Ե՛լ, արևդ Հայաստանեայց՝»:

ՅԱՐԱԳԻՐ

Թ Ի Ի Բ Ի Ա

Յ Ա Ս Ի Ե Յ Ա Ր Գ Մ

ԳԱՌՆ ԻՐԱՌՈՒԹԻՒՆ, ՐԱՅՑ ԵՆ ԱՅՆՂԷՍ ԺԵՄԱՆՑՈՒԹԻՒՆ

Օսմանեան պատմութեան էջերը սեցնող գորաւոր
անթիւ գեղքերը եթէ կամաւ մոռացութեան տանք իսկ,
պաշկանեան վերջին անցուցումները միայն բաւական են
յիշեցնելու, թէ մեր այս պետութեան ստորը տերօրէն
խնամահի սկսած է: Այո՛, այսօր մեր (օսմանեան)
կեանքն ու զօրութիւնը, մեր միջազգային դիրքն ու
ներքին կարողութիւնները այնքան են պղտփկեցր ու հի-
ւանդացր, որ ուրիշներուն վաճը, պատկառանքը չէ,
ամենափոքրիկ յարգանքն իսկ գրաւել չեն կարող:

Պետութեան այս անփառունակ նահանջը միշտ գեպի
ստորնացում, միշտ գեպի անկում ու ջրայտում, միշտ
գեպի խեղճութիւն այնքան աչքառու է ու ակներև, որ
այսօր շատ քաղաքացիներ իրաւունքով ամօթ կը համա-
րեն իրենց համար այս պետութեան պատկանած լինելին:

Եւ արգարև ըմբոստացուցիչ իրողութիւն մ'է այն, որ
միլիտարուներ թեև իրենց կեանքն ու զբաժնն, իրենց
բազուկէն ու սիրտէն, իրենց միտքէն ու ձեռքէն անհուն
արժեքներ ու բարիքներ կը նւիրեն, ի մի կը հաւաքեն,
բայց այդ ամենը ո՛վ միայն — պէտք է ունենին
սակ — չեն գառնար իրենց երջանկութեան, իրենց փառ-
քին ու հարստութեան, իրենց յառաջադիմութեան աղ-
բիւր, այլ կը հասնի ի միասին կազմելու համար Տ Ի մ-
ն ա բ կ ու թ Ի ւ ն մը, որ շարիք ու անպատուութիւն
միայն կը տարածէ իրենց վրայ:

Օսմանեան պետութիւնը, կազմած միլիտար բա-
ղաքացիներու անկարգբարիչ զոհողութիւններով, բաւի
որ ի վիճակի չէ սպահովելու իր անդամներու խաղաղ
ու բարգաւաճ քաղաքարթութիւնը, իր դէմ կը յա-
րուցանէ արգարև ու խորունկ դժգոհութիւն:

Ամեն պետութիւն իր քաղաքացիներու համար —
ուրեմն և օսմանեան պետութիւնը մեզի համար — ն պ ու
ս ա կ չէ, մ ի լ ոց մ'է մեծնալու, յառաջադիմելու,
զորանալու: Իսպառմի մը հասնելու համար գործածուած
միջոցը եթէ անյարմար է. անբաւական կամ սկաւր,
հարկ կը լինի զայն փոխարինել լուսագոյնով, յարմա-
րագոյնով: Ասիկա բնական օրէնք մ'է, որուն չհպատա-
կողները չարաչար կը պատժին:

Արգ Գրտնք, թէ օսմանեան պետութիւնը որ օրի
վրայ կը խեղճանայ, գիտնք, թէ օսմանեան քաղաքա-
ցիները որ օրի վրայ աւելի է աւելի ծանր կըզգան
ձնշումը պետական բռնին, գիտնք, թէ ընդհանուր
սրտմութիւնը յիշաւններու իտիքնէն՝ մինչև Պասրա
և Կերթանիկ Արարայեան՝ մինչև սպերջանիկ Հայաս-

առնի սահմանները, կ'աճի, կ'ուսմանայ, գիտեք այս ամենը և, իբրև իրուստերը մեր կենսքին, կը խորհիք միայն չէ, կը ծրարեք ալ պետական ասրբեր ձե մը, ասրբեր ուզողութիւն մը, որ նախկինի կամ մինչև Տիւայ կղզեի անդարմարութիւններէն ու սխաւերէն զերծ ըլլայ:

Խնդիրն ուրեմն «սովանեան պետութեան» անունին կամ անկէ բաժնետու ու չբաժնետու մասին չէ, որովհետեւ ասոնք ետեան կ'ապ շունին Տիւայեան նպատակին Տես, որ—ընեք անգամ ալ—մէկ խոսքով մեր երջանկութիւնն է: Մենք—Թիւրք, Տայ, յոյն, պուլկար, արաբ, քիւրդ և այլն անուններով—քաղաքացիներս կը սիրենք Քալ ու ապրին, ա՛յո՛, զո՛հ և զո՛հ Տոն միայն, ուր մենք մեզի աւելի լաւ կըզգանք: Մենք մեր արեւը կը թափենք միայն այն դրօշակին տակ, որ գիտէ բարձր պահել մեր ճակատները ուրիշներու գիծաց: Եւեղե՛հ, ամութարք, յաճե՛ք պարտան, արգահասարքի ու եարդի արժանացած դրօշի մը անգերազանգելի պատիւին Տուար ջանք ու արիւն թափելը պէտք է այսուհետեւ քանակորոգ դարձան եշնահաստակութիւն անւանի:

Օսմանեան պետութիւնը զորուոր ու պատակաւելի, Տաշ ու Տամաշի բաղաբարթութեան և մարդկային լուսաբան իդէալներու,—աս հա անկեղծ ու արատազին փափաքը մեր աննուս, որ զայն կը կազմենք ու կը յորինենք: Այս բանին Տամար պէտք է աշխատիք մենք ու միշտ այս նպատակով պէտք է երես դարձնենք բոլոր այն սխալներէն ու վտանգաւոր երևոյթիւններէն, որոնք մեր գոճախտութիւնը կերտեցին և մեր ժուրացիանի պատուը միայն փայլեցրցին:

Ուրեմն, ճակատարաց և Տամարձակ ըսելը և ընդունելը, թէ օսմանեան մեծածուալ կայսրութեան անկումին պատճառները կը բանւին աննուսմեծ չափով թիւրք ցեղին մէջ և աս թէ ինչպէս Ով որ քիչ շատ եանօթ է այս պետութեան ծագումին, նա գիտէ, թէ Օսմանի աշխրեթը—ցեղով թիւրք—երբ այս կողմերն արշաւեց, նա անարգել յառաջացաւ շնորհիւ ո՛չ թէ իր քաղաքակրթական ընդունակութիւններուն, այլ իր ղէնքին, սուրին ու իր ճիւղիտ խաղողի անմրցելի առակելութիւններուն: Ըսա կորած ժամանակի մէջ թիւրք փափակեցներու զաւր կարեք անցաւ աս Տարին ասարժութիւններ, որոնց վրայ միջնուար բնակիչներ սարսափէն ու կոտորածէն զարճուած հպատակեցան անոր: Նուստը բռնուցքն էր, որ սակայն չէր կրնար տեսական ոյժ Տամարիլ Պետութիւնն իր բարձր գործառնութիւններով, ենդերեկան վարչապետութիւններով միայն մեծնալ չէր կրնար, ինչպէս որ չէրքան Պետք էին գիտութիւն, արհեստներ, առևտուր, ճարտարաբանս, իսկ ասոնցմէ և ոչ մէկուն հակամիտութիւն ցոյց աւաւ, «պետութեան» ամբողջ ծանրութիւնն իր վրայ առած թիւրք ցեղը, որ սակայն միշտ մոլի սիրահարը մնաց զենքի և գիւղորու-

թեան Հպատակները, բացի աուրքէ ու պարտակաւութեան ուրիշ ոչ մէկ գործ ու ձայն ունէին պետութեան նաւը վարելու մէջ: Ասիկա մնաց մեծաշնորհը Օսմանի թոններուն զեռ մինչ այսօր իսկ Բաղմաթիւ ազգեր աւին իրենց գրամը, իրենց աշխատանքը և իրենց կենսքը այն պետութեան համար, որու լաւ կամ վատ բախաղ անօրինեցին միայն ու միայն թիւրքերը: Այս վերջիններն են վտակած բոլոր փառքերն ու յաղթութիւնները, ինչպէս որ անոնց են նաև պարտութիւններն ու անպարտութիւնները օսմանեան պետութեան:

Դեռ մինչև այսօր ամբողջ պետութեան գործերը իրենց ձեռքն ունին թիւրք օճախէն ելածները միայն, իսկ միւս ազգերը կարենա թէ չկան: Եթէ երբե՛ն երբե՛մ այս կամ այն կարևոր գործը կը տեսնենք յանձնուած Տայ ամիրայի մը, կամ յոյն չորպաճիի մը, այդ միայն բացառութիւն մ'է զուս անՏապակալ Տարմաճարով, միջնուս անդին ամբողջ Տուսապակալութիւններ ու համայնքներ ոչ միայն չեն յարգուի, այլ և անլուր շարաշահութիւններու կենթարկին: Այդ չէ՞ պատճառը, որ մէկիկ-մէկիկ իրենց օճիրը ազատեցին Ղիէն նայն սկսած մինչև Ըամ ու Պաթմա՛ սարսափութիւններուն վրայ գանաղ բաղմաթիւ ազգութիւնները:

Ընկերային կենսքին մէջ օրէնք է, որ իւրաքանչիւր Տիւարիւթիւն, որ չի Տամապատասխաներ զինք կազմող, իր բովանդակութիւնը որոշող, իրեն կենսք ու զօրութիւն պարգևող ասրբերու, հոսանքներու, խորակացութիւններու: Զգառաճներուն ու պահանջներուն, այդ Տիւարիւթիւնը վաղ թէ ոչ գառապարտած է կորըստի:

Արդ օսմանեան պետութիւն կուսած ընկերային այս վիթխարի Տառասութիւնը որովհետև իր սկիզբէն մինչև այսօր, Տակընթաց զգաց զինք սնուցանող ազգութիւններու շահերուն ու իրաւունքներուն, որովհետև խորթ Տօր աշքով նայեցաւ իր խելօք զաւակներէն սերպին, ուսմանին, պուլկարին, յոյնին, Տային, արաբին և ըն և այդ ամենը ըրաւ շոյեղով միայն իր շփացած թիւրք անուն բաւալան անկարգ որդին, այդ պատճառով երթալով ձեթոնցաւ ու Տառաւ իր այս օրւան աննախանձ ձեկի վիճակին:

Փառիշտը «Այի Օսման»ի գերդաստանէն, վեզիրներն ու փաշաները թիւրք, վալիները թիւրք, միւթասարըճները և իրենցմէ վար մինչև յետին պաշտօնեաները թիւրք, միշտը, Ֆերիքը, լիվան, պինպաշին, իզպաշին, Օպաշին ու չափունները զարձեալ թիւրք գառախաղը, զօմիտքը, ժանդարման, վերը, վաքը, առչէը, եանը միշտ թիւրք, թիւրք, թիւրք օղլը թիւրք, իսկ միւսները, միւսներն Ե... օայլէ փառիշտհիտէ...

Ահա «այստեղ և թաղւած շան գուլեզ»։ Օսմանեան պետութեան հոգեբու կրճատումն ու բնակչութեան ազքառացումն գաղտնիքը հոս է: Պետութեան ծան-

րութիւնը թիւրքերուն շահ և թերևս անսնցեւ աւելի Եանրացած է եղեր միշտ ու կը Եանրանայ այսօր ալ միւս ազգերուն վրայ, որոնց ձայնը չի լսւիր Ինչո՞ւ, որ գրքի մէջ գրած է, թէ 300 անար աշիրեթ՝ մը թէ պիտի իշխե և թէ անոր պետութիւնը պիտի գլխանայ, ապրի Ար խիշդը, արամաւանութիւնը կ'ընդունի, թէ թէ 30 միլիոն բնակիչ հաււոց օսմանեան պետութեան բոլոր գործերը պիտի վարէ ցեղ մը, որ իր բոլոր վարչականութիւնով ու խառնուրդներով միասին հազիւ հազ 7 միլիոն կը հաշուէ Ինչո՞ւ համար, որ կրօնքը կ'ընդունի, որ 20—25 միլիոն ազգաբնակչութիւն - յոյն, պուլխար, հայ, արաբ ևայլն—ստեղծէ, շինէ և կազմակերպէ պետութիւն կոչած սուն մը, իսկ այդ սուն կ'առավարութիւնը ձեռքը Քայ միայն և միայն թիւրք կոչած զօռապետ եղբոր, որ շնչին փորձամանութիւն մը միայն կը կազմէ:

Սա ընկերային արտերդ մ'է, անարամարան իրողութիւն, որու ազնաբեր հեռանկարները պիտի չ'ուշանային, ինչպէս որ չ'ուշացան:

Ահա օսմանեան պետական պատմութեան մէջ ամենէն կողմի սխալը, զոր սրբագրել պիտի աշխատին բոլոր անոնք, որոնք օսմանեան պետութիւնը բարելաւել կ'ուզեն անկեղծօրէն: Խաբըր մոլիներու, տգէտներու կամ պաշտօններ պաշտօնիչու ձգտող ազգարարներու մասին չէ է հարկէ:

Օսմանեան պետութիւնը պիտի լինի իսկական արաւայայիչը իր բովանդակութիւնը լեցնող բոլոր ազգերու ալ ձգտութիւնն ու կարծիք, և ոչ միայն մէկուն այն ալ փորձամանութեան: Կառավարութեան և երեսփոխանական ժողովին մէջ—որոնք պետութեան ներկայացուցիչներն են—ձայն և աժոռ պիտի ունենան թիւրքերուն շահ և շատ հոշ թիւրքերուն աւելի—նաև արաբներ, յոյներ, հայեր ևայլն, ապա թէ ոչ արգիւնը կ'ըլլայ այն, որմէ զզւած ենք ար:

Բայց թերևս առարկի, թէ կոն երկիրներ, ուր կառավարողները երկրին չափազանց անշան փորձամանութեան կը պատկանին և ուր մեծամասնութիւնը միայն կառավարող է: Այսպէս օրինակ Հնդկաստանի և Եգիպտոսի կառավարութիւնը իրենց ձեռքը ունին անգրիտները, որոնք խիստ շնչին մասը կը կազմեն, օրինակ 250 միլիոն հաււոց բնիչ հնդկաստանցիներուն: Ինչպէ՞ն կ'ըլլայ, որ այդանց երկիրը օրէ որ յառաջ կ'երթայ փոխանակ բայթալու:

Գառափան.—Հնդկաստան ու Եգիպտոսը կառավարող անգլիացիներու և օսմանեան պետութիւնը վարող թիւրքերու միջև բազմաբարձեան երկինքէ երկիր տարբերութիւն կայ: Այ թէ ետքը միլիոն հազար նոյնիսկ մէկ միլիոն անգլիացիներու ձեռքը ամենայն վստահութեամբ կարեիք եր յանձնել թիւրքիոյ բախալը, միշտ վստահ ըլլալով, թէ անոնք պիտի շնչենէին ու Եազիցներին

երկիրը, փոխանակ անապատի վերածելու զայն, ինչպէս որ ըրին թիւրքերը:

Արողհեան, այ՛, պետութեան պէս ընկերային բարդ յօրինանք մը՝ յատուցութեամբ վարելու համար, ունհրածեշտ է արամագրութեան սակ ունենալ բազմաբարձեան, գիտական անթիւ միջոցներ ու կարողութիւններ, զորս շատոնց ունին անգլիացիները, բայց որոնց նոյնիսկ ամենէն տարբաններէն զօրիկ է գեռ միշտ այսօր թիւրք ցեղը:

Ստուգիւ ամենհասարակ ուշագործութիւն իսկ պիտի բաւէ հաստատելու, թէ թիւրք կեանքի բազմաբարձեան աստիճանը, յարգու երես ելլելիք՝ բան չէ: Թիւրք ցեղի ընկերային յարաբերութիւնները, թիւրք ցեղի գարոցները կրնային շատ շատ նախանձը շարժել միլիոն դարերուն, իսկ քսաներորդ դարուն անոնք այնպէս կը յարմարէին, ինչպէս Լաֆօնթեի գորարը եղի մեծութեան: Այսանց թող ներսի վերապահութեամբ միայն անցնել ընտանեկան կեանքի վրայէն, սովոր չենք, մանաւանդ թէ Քասակար կը գանենք իսկ, խաբ ու բնագրատութիւն վառնել այնտեղ, ուր սեւը ստպանն ի՞նչ ընէ: Անենք օրինակի համար կրթական վիճակ թիւրք ցեղին և համեմատենք ոչ թէ երբանիկ ու սարիներէ ի վեր դասմանագրութեան՝ բարիքները վայելող եւրոպական օրէն ազգի, այլ նոյնիսկ իրենց զուռ դրացի ապրող հայերուս հետ:

Թիւրք բանակի հայ զինուորներու 100-ին 99-ը գրել կարգալ գիտէ: իսկ թիւրքերու միայն 100-ին 8-ը, ես անձնապէս ստիկա ստուգած եմ զանազան թագաւորն եր ու մէջ և այդտեղ է հասած միլիոն թիւը: Նոյն ցուազին պատկերը կայ նաև գուրու: Օսմանցի հայերու 100-ին 80—85-ը գրել կարգալ գիտեն, մինչդեռ թիւրքերու միայն 7—8-ը, Երթութեան սեպակեան թիւրքերը հայերու հետ ալ չեն բազմաաւելի: Այս գառողութեան զարհուրելի Եանրութիւնը կըզգանք մանաւանդ այն ժամանակ, երբ յայտարարենք, թէ հայերը բազմաբարձեամբ ազգերու հետ համեմատելով կը գանին սակաւին նախնական, կէս բազմաբարձեան աստիճանի վրայ... Իսկ թիւրքերը ո՞ր կը ձեան...

Մէկ երկու խորհրդածութիւն ևս:

Ա) Մտաբերներ, որ հայերը—մասնաւոր պէս վերջին դարուն—ենթարկեցան անսեպական ու բազմաբարձեան անօրինակ հալածանքի, որ անտարակոյս պիտի անդրադառնար նաև անոնց կրթութեան վրայ:

Բ) Թիւրքերը—գեռ միշտ վերջերս—իրենց ձեռքն ունենալով ամեն իշխանութիւն, զերծ ըլլալով կտորածէ յաճախ յատուցող իրաւունքով յարիւրակելի իսկ հայերէն շատ բարիքներ, թէպէտ և աւելի նպաստաւոր պայմաններ ունեցած են, բայց գէթ կրթութեան մէջ չեն կրցած հայերուն շահ յառաջանալ:

Եզրակացութիւն.— Ա՛յն, որ թիւրք ցեղը—շատ մեղծ

բացառութեամբ — բազմաբնութեան մէջ բարձր-
նալու համար շատ դանդաղութիւն ու դժւարութիւն
ցոյց կուտայ:

Արդ, օւմանեան պետութեան բախտն տեսնուեալն
միայն նպատակաբարձր էր և է կառավարութիւնը
միայն ու միայն յանձնել այս տեսակ ցեղի մը ձեռքը:

Աւելի նպատակաւոր եզրակացութեան չլիարի յան-
գինք, եթէ բազմաբնութեան Երկու ազգերը պետու-
թեան տնտեսութեան տեսնուեալն:

Պաշտօնեաներու լեզուները միայն և միայն սպասող է
և ոչ արտագրող: Իսկ ո՞վ շքիտե, թէ պետութեանն
ուճիկ սասցող պաշտօնեաներու 1000-էն միայն —
մէկն ըլլալով նաև զինուորներն ու զինուորակազմները —
10—15-ը հայ են, համեմատելով թիւրքերուն հետ:

Ստեղծած է պաշտօնեական պարագիտ դասակարգ
մը զարմեալ թիւրք ցեղէն: Արդարև այս պաշտօնեան-
ութիւնը, եթէ ոչ արիակերութեան, գեթ բազմոցի վրայ
հանգիստ նստիլ և ուսելու միայն վարժած այս ազգի
մէկ բնորոշ առանձնայատկութիւն է զարմեալ: Լիկփը
պէնէն զատել կրցող մը անպատճառ պաշտօն կը տեսնէ
եբազին մէջ: Բոլորն ալ եֆէնտի են կամ պէյ, ազա
չունին:

Հեռակարգ այն է, որ մէկ կողմէն թիւրք ցեղի ար-
տագրող կորովը կը պակսի և միւս կողմէն պետութեան
դանձին վրայ թիւրքերու ահագին բանակ մը կը ծան-
րանայ մարտնչներու պէտ: Այժմեան պաշտօնեաներու
մէջ բանի բանիներ կան, որոնք պղինձ մը աւելի լաւ
պիտի Ենեմին, հող մը աւելի լաւ պիտի վարէին, բան,
օրինակ. վանի վիլայէթը: Այսօր մէջ մը դաւ ի բե-
ն երևու և գալ է մ'ն երևու զեմ փողով և իր շուրջը
հոսեցնող պաշտօնեաներու ի՞նչ բազմութիւն կայ,
որոնցմէ երկիրը աւելի պիտի օգուէր, եթէ ջորւ պան
լինէին կամ պօսթան ճիւղ... Միմիայն իրենց թիւրք
ըլլալն է պատճառ, որ այսօր արդար թեւ ան
գործը յանձնած է շատ դատաւորներու ու դատա-
խազներու, որոնց կոնսակին զգուսի կողմերը աւելի
պիտի սաղէին, բան դատարաններու կանաչ աթոռները...
Ե՛՛հ, այս այսպէս ըլլալով գեռ կարելի՞ է լրջօրէն խօսել
օսմանեան փառաւոր սպազայի մասին:

Դեռ աւելին կայ
Բարեբախտութիւն է, որ թիւրքն իսկ, ամենէն մեծէն
մինչև փոքրը, կը տեսնեն, թէ օսմանեան նաւը արի-
ներէ—շատերը կ'ըսեն զարբեր—ի վեր կ'ընկզմի, բա-
րեբախտութիւն է այս կ'ըսած, որ գեռ երկէ թէ չէին
ոչունը վտանգ, յոգարիման սաբէր, յարաւոր օգու
արուլ օսմանը՝ և ստանց նման մեծամիտ ազազակ-
ներով օղը լեցնող շարք աւել անն էր, խօսքի ունառի
օճառէ հերոսներու հիմա բոլորս հասկցած ենք, որ մեր
ստուը բանդած է, մեր օճախները մարտն: Անշուշտ
չենք մեզազգեր թշնամին, որ մեզ հիւանդ գանկով մեր

վրայ կը յարձակի և կը յաղթէ մեզ: Չէ որ մենք ալ
կարիճութիւնով գրաւեցինք այս հողերը, ինչո՞ւ հիմա
կը վերագործենք...

«Որովհետև — կ'ըսեն թիւրքերը — ի օթ ի պ ս ու ը
(բանապետութիւնը) մեր հայրենիքը փճացուց, բան-
պետութիւնը մեզ մահաւան հասցուց»:

Հաստատենք և ստորագրենք:

Բայց սա իսթիպատար ի՞նչ էր մեր երկիրն մէջ և
ո՞վ էր անոր ոյժ ու սնունդ աւողը: Ընդհանուր անորոշ
խօսքերը թողնենք: Խօսիք իրական, շոշափելի փաստերով:
Իսթիպատար կառավարութիւն մ'էր, որ իր գրուին
ունէր թիւրք թագաւոր մը, սուլթան շաիր կամ
Մէքիմ անունով, որ ունէր զօրաբանակ մը թիւրքերի
բազմաբնութեան, որ ունէր հայրենիքի դաւաճան պաշտօնեա-
ներու վահմակ մը, զարմեալ թիւրք ցեղէն:

Այս կառավարութիւնն էր, որ բանցեց օսմանեան
պետութիւնը: Ուրիշ խօսքով թիւրք ցեղի ծոցէն միշտ
ոյժ է կենք սասցաւ այն բանապետութիւնը, որ օս-
մանեան հայրենիքը բանցեց: Ծանրագոյն պատասխանա-
տուն թիւրք ցեղն է ուրեմն օսմանեան պետութեան մէջ և
այս վերջինը կը բարեկարգի միայն այն ժամանակ, երբ
թիւրք ցեղը կը զագրի ոյժ և կենք տալէ այն կա-
ռավարութեան, որ օսմանեան պետութեան գործերը
կը վարէ:

Հաշիւարդար է սա և պէտք է, որ բոլոր իրողու-
թիւնները հրապարակին, պէտք է, որ բոլոր ճշմար-
մարտութիւնները մերկանան Ու եթէ յօգուսի մը
Ծաւալը հնարաւորութիւն չի տար մեզ թիւրք մասունչի
թիւրք գրականութեան, թիւրք դիւստակութիւններուն՝
կենտրնի փաստերու շարքն մը բերել մեզանք և ապա-
ստանքը, թէ հակաբան կան և հեռակարգ սո-
մանեան պետութեան համար վնասակար է թիւր-
քերու «գերիշխանութիւնը» կառավարութեան մէջ:
գեթ ուժեղ և վճռական փաստերով այստեղ ի վիճակի
ենք հաստատելու և արար աշխարհին առաջ պրաւալու,
որ թիւրք ցեղը բազմաբնութեան խիստ ստորին սա-
տիճանի վրայ կը գտնուի և հեռակարգ ուճի է պետա-
կան կենտրնի մէջ անոր աշխատութիւններուն հանրա-
ժիլը... Խօսեցնենք թիւրք օճախէն ելած փաստերը
միայն, սուս ընդունինք թիւրքերու դեմ ըսած բոլոր
խօսքերը և լսենք միայն թրքական սեղեկութիւնները,
պաշտօնական լուրերը կառավարական վիճակագրու-
թիւնները:

Թիւրքը դիմակ չունին, կեղծիքը չի գիտարար անոնց
արամաբանութեան առաջ, աճպարարութիւնները աւե-
լորդ են թիւրքերու լրջութեան քով: Կանաչաւոր թէ աչքի
առջև ունենալու է, որ անոնք հաւաքած են երկրի
այնպիսի մէկ մասէն, որու մասին բողոքներ չեղան ու
չեն ըլլար և որը կը համարուի թիւրքիայի ամենէն բա-
րեբախտի ու խաղաղ գաւառներէն մէկը.— Կմասիայէն:

Փորք Ատոյի այս կարևոր կերպովը կը գտնուի Արվարդի բանակի քանակարհին վրայ, որիսի երկու ասիերուն է 2 որ միայն Յամսունն հետու է Պոսուն է որ, արեթե կէս առ կէս հայ է թիւրք բնակութիւն ունի այս քաղաքը. անշուշտ ոճրագործները, աւազակները, վայրենիները զսպելու համար—ունի բանա:

Չեւքիս տակ ունիմ այս բանաի վիճակագրութիւնը, քուշած կառավարական տոմարէն: Այս տարի մարդկային այս արգելաբանը ունեցած է 417 բնակիչ, որոնցմէ 196-ը ոճրագործներ են (Ճիւնայիթ), 69-ը յանցաւոր (Ճիւնա) և 142-ը ձերբակալներ, որոնք գեռ չեն գտապարտած:

Այդ 196 ոճրագործներէն 9-ը հայ են, 5-ը յոյն, 9-ը բիւրգ, 14-ը չերքեզ և 159-ը սեղացի, այսինքն ամասիրտի թիւրք:

Այսպէս ուրեմ, եթէ հայերու հետ բաղդատները կը տեսնենք, որ թիւրքերու 126 մարդէն մեկը ոճրագործ է, իսկ հայերու 1666-էն միայն մեկը:

Հարունակներ.

69 յանցաւորներէն 1-ը հայ է, 6-ը բիւրգ (5 այր մեկ կին), 3-ը չերքեզ և 59-ը թիւրք (57 այր, 2 կին): Այս հաշուով թիւրք 350 մարդոցմէ 1-ը յանցաւոր է (Ճիւնայիթ), իսկ հայերէն միայն 15,000-էն 1-ը:

Առնենք ձերբակալները (մեկգուֆ):

Առնց 2-ը հայ են, 3-ը յոյն, 4-ը բիւրգ, 5-ը չերքեզ և 128-ը սեղացի թիւրք (126-ը այր է 2-ը կին): Այս կը նշանակէ, թէ հայ 7500 մարդոցմէ 1-ը կը ձերբակալուի, իսկ թիւրքերու 156-էն 1-ը:

Այս թիւերը շատ բան կ'ըսեն, մանաւանդ երբ աչքի առաջ ունենանք, որ յսահմադրական" պաշտօնեաներէն շատերը գիտութեամբ կամ անգիտութեամբ, գրեթէ միշտ կը մեղանշին և այն ուշ. ի նպաստ թիւրքի:

Վերի բոլոր թիւերը յսահմանադրութենէն" աստիճան բանաի րնակիչները ցոյց կուտան: Այժմ աւելի լաւ գաղափար կազմելու համար առնենք մեկ տարւան մէջ եղած դատապարտութիւնները: Չեւքի տակ ունինք 1912—1913 տարիին ոճիրով (Ճիւնայիթ) դատապարտածները հետեւեալ կերպով.

- Ճամբայ կորոզներ—9 Տոբի, գողութիւն—2, կանխամատնած սպանութիւն—3, սպանութիւն—28, մարմնի անգամ կորոզներ—15, աղայի բռնաբարութիւն—24, աղբիկ փախցնողներ—10, կեղծարարներ—4, հրձիգներ—7, հասարակաց Ճամբու վրայ գողեր—8, կապելով գիշերուան գողեր—9 պատ ծակելով գող—1, սուս վկայ—1 և զրպարտիչ 1: Ընդամենը 122 Տոբի:

Արդ տանցմէ 2 Տոբի հայ են, 3-ը յոյն և 119 Տոբի թիւրք:

Այսպէս ուրեմ, 15,000 հայ ասրեկան — միջին հաշուով—կուտան 2 ոճրագործ, այսինքն 7500-էն մեկ,

իսկ 20,000 թիւրքերը կուտան 119 ոճրագործ, այսինքն 167-էն մեկը:

Համեմատութեան վիճիւր անոգք է թիւրքերու համար: Աւշագրաւ պարագայ մ'ալ, զոր կ'որձանագրենք միայն ու կ'անցնինք, այն է, որ թիւրք կինը—այդքան կաշկանդուած ու սեղմած այդ տարածքը—սահմանագրութենէն" աստիճան ալ յաճախ այցի կերթայ բանասին, մինչ հայ կինը, որ համեմատաբար աւելի լայն գործունեութեան ասպարեզ ունի, բանասին մէջ չի սեսուեր..

* * *

Այ բաւ է Հասկոցղին այսչափն ալ շատ է: Արդար չեն հիմա անոնք, որոնք վասահութիւն չունին թիւրքերու ձեռքով կատարելիք դարձեալագրութեան" վրայ իսկական հայրենասերներ չեն անոնք, որոնք յանուն երկրի ազատ, անարգել ծաղկումին ու զորացման, կ'աշխատին սահմանափակել շարքները, որոնք—թիւրքերու ձեռքով սահղծւած — այնքան քաժախտացուցին այս երկիրը..

Ի Ր Օ Շ Ա

Մամսիս

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն

(Ք Ա Ս Ա Ք Ա Ք Ա Կ Ա Ը Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ը)

Նախկին Հասի Նոր արկածի վերաբերմամբ, թէ և երկու հոգմանուոր պետութիւնների գեսպանները պարտից կատարութեան հաստատացուածներ ախ, որ իրենց կուտարութիւնները կ'արգիլեն նոր որևէ նոր փորձը, այնուամենայնիւ կասկածներ կան, թէ ուստաց քաղաքակրթութիւնը հեշտութեամբ ձեռք չի ուղղում վերջնել նրանից: Այս կասկածի սպառցոյցներ են հանդիսանում Մախի Սարգար՝ Նըրայը Սալթանէի Իերլին գտնելը (ուր վերագրածը է Նախկին Հասի) և Թուրիի ուսուսկան հիւպատոսարանի կողմից Աւգո քրդերի յեղապետ յայտնի Սեփի և Նոյի ուստաց հիւպատոսի Թուրիի կանչելը: Թուում է, թէ Մամէզ Ալիի վերագրածի համար Արպատականում՝ վաղուց է ինչ հող է պատրաստուում:

Ուստան գլխական հակամարտութիւնը որեցոր ծածկած գրութիւնից բացառակ դանախու վրայ է: Մինչև այժմ ուստաց և անգլիական բանկերը, ի նկատի ունենալով սփերաների բաժանումը, զգուշանում են տարբեր շքաններում հողերի և կալուածների գրաններ վերջնել: Սակայն այժմ՝ ուստաց բանկի՝ Սպահանում (որ թէ և չէզոք զան է համարուում, բայց աւելի շուտ անգլիական սպրեցութեան շքան պիտի

նկատել) Զիլիի-Սուլթանի կալանների, այսպէս սասն, հովանաորութիւնը վերցնելու փաստից յետոյ՝ անգլիական բանակն էլ, իբ հերթին Պարսկաստանի հիւսիսային մասում, կալանների գրաններ է ձեռնարկել:

Հաւանաբանութեան արտայայտութիւն պէտք է համարել նաև անգլիական թերթերի և, մասնաւորապէս, Պոստիկ Արեւելք՝ շարաթաթերթի, խիստ անհամակիր վերաբերմունքը դէպի ուսները և նրանց բայերը Պարսկաստանում: Եւ եթէ է ինչափ ունենանք, որ այս շարաթաթերթի թղթակիցները մեծ մասամբ պաշտօնական անձնաւորութիւններ են —տեղական անգլ. հիւսիսաստները — ապա հասկանալի կը դառնայ թերթի պայքարի պաշտօնական բնոյթը: Յիշենք նաև այն խիստ սասնութիւնը, — որ երբեմն թշնամաքի կերպարանք է սասնում — որ գոյութիւն ունի շեքագի վերահսկիչներով ղեկավարուող ժանդարմների և ուսուցիչ մարզիչների ազդեցութեան տակ գտնուող կողակների մէջ: Վերջիններս իրենց զինուորանոցին կից գտնուող Մաշիկի Մեդիանի (զինավարժութեան հրապարակը) մուսը մի երկու անգամ փակեցին ժանդարմների առջ: Այդ դէպքից յետոյ երկիւղ կար, որ արիւնոտ ընդհարում կըսկսէ երկու կողմերի մէջ, սակայն վերջում կողակները զիջեցին, թէև հրապարակի վերահսկողութիւնը իրենց ձեռքումն է:

*

Գ եր մ ա ն ի ա յ ի շ ա հ ա գ ր գ ու ո թ ի ւ ը Իրանում զարգանում է Սնցեալ մեր տեղեկագիրն ու զարգիւցուց յետոյ, հասնող եւրոպական թերթերը բերեցին անգլո-գերմանական մերձեցման և այդ ուղղութեամբ մեծ պաշտօնական արտայայտութիւնների լուրերը: Այդ մերձեցման մասնաւոր նշաններն արդէն նկատելի էին մեզ մաս և մենք շեշտեցինք դրանց վրայ անցեալ անգամ:

Այս անգամ մենք կը մասնանշենք գերմանական շահարգութեան մի նոր փաստը. — գերմանական հիւսիսաստարանի հաստատուիլը Թաւրիզում: Մի բանի ասրի սուրջ այնպէս գոյութիւն ունի գերմանական առևտրական մի ներկայացուցիչ, որի հետևանքով վերաբուցեց և այդ հաստատութիւնը: Այժմ Թահրանից այնտեղ է քանապարհւում գերմ. ղեկավարանաւ բարաւզար Լիթթերը իրն առաջին հիւսիսաստ, որով հիւսիս է դրուում ուսուցիչական սֆերի մէջ գերմ. ազդեցութիւնը հիշեցու գաղափարին:

Հակառակ իրենց թւական նւազութեան, գերմանացի հպատակները Ասրպատականում առևտրական կարևոր ձեռնարկութիւններ ունին և օրեցօր ընդարձակելու ջանքեր են անում: Գերմանոստու պայքար կայ և այդ անդից Թաւրիզի շրջակայքում գտնուող քարածխի հանքերի բուռն վէճը: Եւ այժմ՝ հանքերի մի կողմում

ուսուցիչ՝ և միւս կողմում գերմանական գրոշակն է ծածանուում:

Ձեռք խօսում փոստային բոլորների Ռուսաստանի վրայից արանդիքը Պարսկաստան արգիլելու ուսուցիչական Երագրի և Գերմանիայի բողոքների հիման վրայ նրա վիճման մասին, որ գերմ. շահարգութեան կարևոր ապացոյցներից մէկն է:

*

Մ ա ն ու կ ը ա հ ի թ ա գ ա գ ր ու թ ե ա ն մասին եղած կառավարական հարցազգրութիւնը — ինչպէս երևում է ստացուող հետադիմներից — մեծ խնդրավարութեամբ է ընդունել գաւաւներում: Յեղի են ունեցել թնդածածակութիւն, հրապարակութիւն և այլ հանդեսներ, մեծ մասամբ երկրի հարաւային մասում: Հիւսիսը սակա բացառութեամբ անտարբեր է վերաբերել, իսկ երբեմն յեղափոխութեան օժիտ Թաւրիզ՝ բացարձակ հակառակ դիրք բռնելու հարցազգրութեան օրինակները ժողովրդի մէջ ցրելուց և պատերին փակցնելուց անմիջապէս յետոյ — ամենքին արդէն յայտնի թելագրաբաններով — ամբողջ դաշտաբազու՝ և արել և ցոյցեր կառավարելով արտայայտել իր բացարձակ հակառակութիւնը սահմանազրուութեան (հարցազգրութեան մէջ իշխււն էր, որ Մեղիքը շուտով պիտի բացւի): Ամբողջ ներկայացուցիչները այդ բողոքով ուսուցիչ հիւսիսաստարան են գիմել, որով և մասնել ներշնչութեան իսկական սրբիւրը: Այս պատերից յայտարարութիւնները պատուելով, սահմանազրուութիւնը մեռած են հաշակել և բազար բաց արել:

Նոյն ներշնչումով և ստարակ Ըռուշա-Գուլէի կարգադրութեամբ, Թաւրիզի ազգաբնութիւնը, մաս 30 հազար հոգի բազարից մի փոքրադի վրայ գտնուող Արի կամաւորն է հաւաքել՝ ուսուսաց նոր հիւսիսաստու Արիֆին ընդառնելու: Եղել են ժողովրդի և պետական հաստատութիւնների ներկայացուցչութիւններ, զարդարական բազմաթիւ աշակերտներ և այլն: Մի խօսքով ուղղակի արբավայել մի ընդունելութիւնը Ձեռք բերւած գոհունաններից երևում է, որ նոյնիսկ ընդունելութեան կարգն էլ սկզբից որոշւած է եղել հիւսիսաստարանից:

Ի է լ ու ը ն եր ի ն ո ր յ ա ը ա կ ու մ ն եր ի պատմաւոր, արիւնահեղ ընդհարում է սկսել նրանց և ժանդարմների մէջ:

